

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Տարեկան գին և Պոլսոյ հոգ 8 ՄԷՃ
Չ Գաւառաց 40 ՄԷՃ
Վ Եղամեայ և Պոլսոյ 4 ՄԷՃ
Չ Գաւառաց 5 ՄԷՃ
Եւրոպայի թերթի գին 60 փր
Հանուցման տողը մէկ անգամի հա
ժար 3 զուրուշ, երկու անգամի հա
ժար 2 զուրուշ, աւելի անգամի հա
ժար զատ սակարկութիւն կրկնայ:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փօրինո 20 սեպտ.

Թաղաւորը Արթուր Լիւսանին ա.
նանձնական կերպիւ ընդունելութիւն
բաւա :

Պէրն 22 սեպտ.

Թաղաւորութեանց հանրազգային
խորհուրդը 13 կրամ ծանուցութիւն ունե
ցող նամակաց համար 23 ստեղծիմ գինը
հիմ բռնեց :

Մարտի 22 սեպտ.

Բաղիւս զօրապետը Մայքսթրաժժժ
քաղաքին վրայ յարձակում բռնա :

Նիւ Եօրք 21 սեպտ.

Կուսակցական կառավարութիւնը
Մաժէի անդրական հիւպատոսին գէմ
ի դորժ դուռած բռնութեան փոխարէն
պահանջուած դրամական հատուցումը
վճարեց Անդրիոյ :

Փարիզ 22 սեպտ.

Պակտած երեսխոսանաց թիւն աւ
բողջացողը նորութեանց քուէարկութիւ
նը հսկաւ 18 ին պիտի կատարի :

Լոնտրա 22 սեպտ.

Օսմանեան փոխառութեան համար
տրուած ստորագրութեանց գումարը 46
միլիոն Անգլ. լիւրայի հասան է : Բաժնե
թուղթերը վաղը կամ միւս օրը պիտի
տրուին ստորագրողաց :

Վիեննա 22 սեպտ.

Բառեւորքի եպիսկոպոսը վերջին
մարտ 14 ին համաձ հովուական նամակին
համար չորս ամիս բանտարկութեան դա
տապարտեցաւ :

Լոնտրա 22 սեպտ.

Օ.Պ. Բոնա. 46 1/8
Ֆոխ 1865—
» 1869 59 3/16
» 1871 —
» 1872 85 3/8

Անգլ. Բոնա. 92 9/16
Օսմ. նոր փոխառութիւն 56 1/16

Լիւբլից 22 սեպտ.

Բաւարի Միտիլի—Օրէն 8 1/4—
» Ֆայր Տօլէրա 5 1/8—1/4
Ֆայրաւ 10000 հակ :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներակիւն երկուշաբթի լուսնալու
դիշերը վեհ. Սուլթանին արու զա
ւակ մը ծնաւ :

Այս պատճառաւ երկուշաբթի
օրը Բարձր. Մեծ—Եպարքոսը կայսե
րական պալատն երթալով իր խն
դակցութիւնը մատոյց վեհ. Սուլ
թանին :

Կայսերական հրամանաւ

Տեղադրի կառավարիչ Սալիհ փա
շան Մամուրէթ—Իւլ—Աղիզի (Խար
բերդ) կառավարիչ անուանեցաւ :

Բ. Դուռը վերջապէս Սալանիոյ

Ներկայ կառավարութիւնը ճանչեւ
որոշում տալով, Արտաքին գործոց
նախարար վսեմ. Արիֆի փաշան
այս որոշումը պաշտօնական կերպիւ
ծանոց Սալանիոյ դեսպան Պ. Բրէսթօրի :

Երկուշաբթի օրը Յունաց Պատ
րիարքին անուան տօնախմբութիւնն
ըլլալով, Բ. Դրան կրօնական գործոց
գիւնարին Միւսէլի Սէրպէթ Էֆեն
տին Յունաց պատրիարքարանը գը
նաց և Բ. Դրան շնորհաւորութիւնը
հաղորդեց Պատրիարքին :

Յունարէն թիւրք լրագրին խմբա
դիր Պ. Բլիթօնիտէս, որ անցեալնե
րը Պալատի թաղը Յոյն աղու մը մահ
ուան առթիւ ծագած անկարգու
թեանց վրայ հրատարակած յօդուա
ծի մը պատճառաւ բանտարկեալ էր,
երկրորդ անգամ դատուելով վե
ցամեայ բանտարկութեան դատա
պարտեցաւ, լրագրին ալ նոյնչափ
ժամանակ դադարեւ պայմանաւ :

Պ. Բլիթօնիտէս արդէն երկու ա
միս բանտարկութիւն կրած ըլլալով,
չորս ամիս ևս բանտարկեալ պիտի
մնայ :

Պատրէթ լրագրին մայրաքաղա
քին մէջ կատարուած կարեւորագ
րութեան վրայ հետեւեալ տեղեկու
թիւնը կուտայ :

Մինչև յունիսի վերջը գրուած
անշարժ ստացուածոց գումարն է
87,997 կտուր : Այս գումարին մէջ կան
44,287 տուն, 30,047 խանութ և վա
ճառատուն, 10,148 շինութեան գե
տին, 3046 միլիթ, եկեղեցի և մար
դապարտական շէնք, 469 արքունական
շէնք :

Այս բոլոր կալուածոց գին որոշ
ւած է 1769 միլիոն 573000 շշ, որ տա
րին 87 միլիոն 53000 եկամուտ կու
տայ :

Յունիսի վերջին ի վեր կատար
ւած կարեւորագրութեան գումարը
վերջապէս գումարին կէսը կանց
նի, բայց դեռ աւարտած չէ : Այս
գումարներուն նայելով, և դեռ չը
գրուած շէնքերնալ ի հաշիւ առնը
լով, կը յուսացուի որ մայրաքաղա
քին և շրջակայից անշարժ ստացուած
ներէն տէրութեան ստանալիք տա
րեկան տուրքը 400000 լիւրայի պիտի
հասնի :

Սնցարները գրքի մը հրատարա
կութեան պատճառաւ Պրուսա աք
սորեալ Հոճա Խահադ Էֆենտին մայ
րաքաղաք վերադառնալու հրաման
ստացաւ :

Մայրաքաղաքին արուեստական
գործընդի (Մէթիսի Սէնայի) համար
Լոնտրայէն չորս մեքենայ բերել արը
ուած են քիմիական ծծմբաւ շինե

լու համար, և քանի մ'օրէն գործին
սկզբնաւորութիւն պիտի ըլլայ :

Արիֆիտէս Տրիպոլի լրագրին
Պէնկաղի նահանգին մէջ հարակաժ
ժանտախտին վրայ տեղեկագիր մը
հրատարակած է, յորմէ կիմացուի
թէ ժանտախտին երևան եղնէն
(ապրիլ 17էն) մինչև յուլիս 16 Պէն
կաղի նահանգին մէջ 121 հոգի բռն
նուեր՝ 73ը մեռեր են :

Սալայն տեղեկագրին գրուած
ժամանակ ժանտախտը բոլորովն
դադարած է եղեր :

Երկուշաբթի գիշեր Արնաւուտ
գեղի մէջ երկու առեւանդութիւն ք
եղան : Փախչողներէն մին ալիւ կին
մ'է :

Այս առաւօտ ժամ իննին միջոց
ները մայրաքաղաքին Սարը կիւղէլ
թաղը հրդեհ պատահելով երեք մեծ
տուն այրեցաւ :

Այս առաւօտ խաղաղի Սիւտիւ
ճէ կոչուած թաղը երկրէն դժգոհ
թրքուհի մ'ինքզինք տանը պարտէ
զին ջրհորը կը նետէ : Նիշն հօրեղ
բօրորքին 24—25 տարեկան երիտա
ւարդ մը զայս տեսնելով կը վազէ
կինն ազատելու համար անոր ետե
ւէն ջրհորը կը նետուի, և բարե
բաղդաբար ջրհորին ջուրը մինչև
պաշտոնցին հասնելով, չթողուր որ
կինն ինքզինք խեղդէ և այսպէս ե
րեք ժամ ջրհորին մէջ մնալէ ետե
դրայիններն իմանալով կերթան եր
կուքն ալ հարէն կը հանեն :

Աթէնքի լրագրերէն մին կը պատ
մէ թէ քաղաքին փողոցներէն քուրժ
հաւքելով ապրող ֆալաֆաթի անուն
խեղճ մարդ մը Ռուսիոյ մէջ վաճա
ռական եղբայր մ'ունի եղեր, որ
այս օրերս մեռեր և 200000 Բուպլի
հարստութիւն թողեր է իր եղբորը
Թշուառ ցնցահաւաքն այս լուրն ի
մանալուն պէս ուրախութեան խն
դեցեր է :

Աթէնքի երկու տարի առաջ դար
մանալի մարդ մ'եկած էր մայրաքա
ղաքս, բոլոր մարմինը նկարեալ Այս
մարդը բոլոր Եւրոպա պարտելէ ե
տեւ այս օրերս փարիզ գացած և հոն
ամենուն հետաքրքրութեան առար
կայ եղած է :

Ահաւասիկ նկարագիրը : Երեւա
կայեալ է մերկ մարդ մը, ոտքէն
մինչև գագաթը շալի պէս նկարուած
երեք հարկեր քառասուն և ութ այլ
ալ կենդանեաց պատկեր կան մարմ
նոյն վրայ, փղերու, կովերի, խոն
րու, սիւնի, քանդակ, սիրամարդեքու
և ամեն տեսակ թռչնոց, նոյնպէս
նուիրական տառեր ու արձանագ

րութիւններ, այլ և այլ գոյներով նշ
կարեալ :

Այս մարդն Եպիրոսի մէջ ծնած
Յոյն մ'է Եօրկի ֆոթիանթինոս Տրա
կոման անուն : Ասկէց շատ տարինե
ր առաջ հայրենասիրութեան պատճա
ռաւ Եպիրոսէն փախչելով Սիւրի վեր
նագաւառները Բոմանի ոսկեհամքե
րը կերթայ բաղդ փնտռելու : Հոն
քանի մը տարի աշխատելէ ետեւ Ման
չու թաթարաց ձեռքը գերի կ'ընայ
Պրիմայի թաթարաց գլխաւորն զօ
ստնաց համար այս մարդուն մարմն
նըն ստեղծող նկարել կուտայ : Ամեն
առաւօտ նկարիչներ կերթային, Տրա
կոմանը կառնուին, և մագաղաթի վը
րայ ասորենկալ շինելու պէս մարմ
նոյն վրայ կաշխատէին երկար ասեղ
ներով, զորս գունաւոր նկարներ
մէջ կը թաթիսէին : Երեք ամիս կը
տեւէ այս գործողութիւնը, իսկ դըժ
բաղդ Տրակոմանի կրած շարժարա
քըն անհնար է երեւակայել : Իւր
կարգէ դուրս ուժեղութեամբ հան
դերձ մահաւորձ վիճակի հասեր է :
Այսօր իսկ կրած ցաւերը յիշած ժա
մանակ աչքէն արտասուք կը հոսէ :

Արդարեւ, երբոր մէկն այդ մար
դուն մարմինը տեսնէ՝ յաղից ցը
լուս ոսպի չափ պարապ տեղ չմա
լով նկարուած, և այդ նկարին հա
մար հարկ եղած միլիոնաւոր ասեղի
հարուածներն երեւակայէ, անհնար
է չապչի և չլարմանայ թէ լինպէս
կրցեր է այդ մարդը գլխաւոր այդ
խժժութեան :

Տրակոման այսպէս նկարուելէ ե
տեւ, իր վրայ եղած հոկողութիւնը
կը թուլայ, վասն զի փախչին ան
հնարին էր այլ ևս, և իշխանին տու
նը կը դուրի իրեւ արուեստական
հարտարութեան նիւթ կամ շարժուն
թանգարան :

Երկար ժամանակ այս վիճակին
մէջ մնալէ ետեւ Տրակոման կը ձանձ
րանայ, փախչելու հնարք կը խորհի
և վերջապէս կը յաղորդի :

Խիստ երկար կըլլայ պատմել այն
բազմադիմի հնարքներն ու անցու
ցած սարսափելի վտանգները, մին
չև որ ինքզինք թաթարներուն աչ
քէն ծածկելով անոնց երկրէն դուրս
ձգեր է :

Այնուհետեւ նոր կեանք մը կը ս
կընի Տրակոմանի համար Եւրոպական
երկրներուն մէջ ընդհանուր հետա
քըրքութեան առարկայ կըլլայ, Վի
էննայի, Պէրլինի, Մոնիխի Բօրէնհա
կի և Ոթօբօմի մէջ ամեն մարդ զին
քը տեսնելու կըլլիմէ : Գերմանական
սատիկանութիւնը որ համետութեան
մասին շատ խիստ, հրաման կուտայ
որ այս մարդը մերկանդամ ի տե
սիլ ներկայացուի, որովհետեւ առանց
զգեստու հագուած է միշտ, մարմ
նոյն վրայ մերկ տեղ բնաւ չկայ : Իշ
խանուհիներ, կոմսուհիներ, նախա

դ ահա հինքեր զինքը անհետ կերթան։
Բոլոր բժշկական ճանապարհը կ'զննեն
զինքը և վկայական կուտան։

Տարակույս չկայ որ փարիզի բժշկ-
կական ճանապարհն ալ պիտի ընեն և
վկայական տայ։

Հերկնական կառավարութիւնն
անցագիր մը տուած է այս մարդուն՝
պատուիրելով որ ամեն գնացած տե-
ղերը գտնուող Հերկնական հիւպա-
տոսը պաշտպանութիւն ու օգնու-
թիւն ընեն անոր։

Մայրաքաղաքի մէջ ջրանկիրաց
գունդ մը կազմելու համար Սպարա-
պետի դուռը կազմուած յանձնաժո-
ղովն որոշմանց վրայ հետեւեալ տե-
ղեկութիւնները կը քննենք մայրա-
քաղաքիս Բազմաշէն Թոքիան լրագրին
մէջ։

Կանոնաւոր դուրս գունդի մը ձե-
ւով ջրանկիրաց գունդ մը պիտի կազ-
մուի, Հարիւր—Ալայը անունով, առ-
այժմ մէկ վաշտէ բաղկացեալ։ Այս
գունդին պէտ կարգուեր է կայսե-
րական առաջին դուրսգտնին գլխ-
գապետի տեղակալ Սպարիթ պէյ, և
վաշտապետ կարգուեր է Իզմիրի պա-
հապան դուրս հաղարապետ կամ
վաշտապետ Շէյքիէն Էֆէնդի։

Ջրանկիրաց վաշտի հարկւրական
մարդէ բաղկացեալ ութ գումար-
տակէ պիտի կազմուի։ Եւրոպայէն
չողեւարժ ջրհաններ պիտի բերել
արուին՝ մէկ մանրերկրորդի մէջ առ-
որն քերկրամ ջուր արձակելու կա-
րող։ Այս ջրհաններուն թիւը գետ-
որոշուած չէ։ Ընդարձակ փողոցներու
մէջ քառաձի կառքով պիտի տար-
վին ջրհանները, իսկ նեղ փողոցներու
մէջ ուսի վրայ, բայց գիւրին եղա-
նակու։ Ջրհանները ճանաչող երած մի-
ջոցին անոնց մեքենայներուն կրակը
պիտի վառի, որպէս զի հրդեհին քով
հասած ժամանակին կարենան անմի-
ջապէս բանիլ։

Ջրանկիրաց գունդին զինուորնե-
րը քաջասիրտ և կորովի մարդոցմէ
պիտի ընտրուին, և ըստ արժանեաց
տառիճաններ պիտի արուին անոնց։
Իւրաքանչիւր ջրանկիրի հարկը զըջ
ամսական, հազուադէպ և ընակարան
պիտի արուի։ Ասկէ դառ Եւրոպայէն
մարդիներ պիտի բերել արուին, որ-
պէս զի ջրանկիրութեան արուեստն
և մարմնամարդութիւնն ուղիւղեն
անոնց։ Ջրայ փոխադրութեան համար
ալ հարկը հատ մամլութէ դուր պիտի
դանուի իւրաքանչիւր ջրհանի հետ։

Վերջապէս զինուորական երկրա-
շափներ մայրաքաղաքիս ամեն կող-
մը լեզն ջուրի հորեր պիտի գտնեն,
և ջրամբարներ պատրաստեն, որ-
պէս զի հրդեհ մը պատահած ժա-
մանակ ջուր գտնելու դժուարութիւն
չքաշուի։

Մայրաքաղաքիս նաւահանգիստը
կանոնաւորելու համար կազմուած
հանրադպրութիւն յանձնաժողովն իր պաշ-
տօնը գոհացուցիչ կերպիւ կատարեց։
Յիսուն խաբարանչան (չամանուրա)
զետեղեց նաւահանգստին մէջ, որ-
պէս զի նաւերը կանոնաւոր կարգա-
կենան, և երկմուտքը չխախտեն։

Եւ որովհետեւ այս կարգադրու-
թիւնն սկիզբնական 20,000 լիրա ծախ-
սեց, և տարուէ տարի ալ
4000 լիրա ծախսուց պէտք պիտի ու-
նենայ, յանձնաժողովը մայրաքաղա-
քիս նաւահանգիստը մոնող երկող
և երկամ նետող նաւերուն վրայ չա-
փառոր տուրք մը դրուաւ։

Վսեմ Արքայազամ վաշային Վէ-
լիւրի ու Միւշիւրի աստիճան շնորհող
կայսերական Մէնչուրին ընթերցման
արարողութիւնն երէկ մեծ հանգի-

սիւ կատարեցաւ Լափրիէն՝ Խալիլին
պաշտաւր։

Ժամ 3 ին Կայսերական դուրաց
գումարտակ մը նաւադարաններով
չարուած էր Խալիլին պաշտաւրն առնել։

Ժամ 3 ին Վէհ. Սուլթանին սե-
նեկապետ Թահիր պէյ նաւով Լափր-
իէն հասաւ։ Կայսերական Մէնչուրը
ձեռքը, և անմիջապէս զինուորական
նաւադարաններն հնչել սկսան։

Վսեմ Արքայազամ վաշային, շքեղ
համազգեստ մը հագած և առաջին
Յամանիէի ժապաւէնն ու Մէճիտիէի
պատուանշանը կախած, Սպարապե-
տ Սիրէթ Էֆէնդիի առաջնորդու-
թեամբ պաշտաւրն դուրս ելաւ, և
ծովեզերքն երթալով Թահիր պէյի
ձեռքէն ընդունեց կայսերական Մէն-
չուրը կանոնաւորեց և մէջ վախուած,
և պաշտաւր վերադառնալով արարու-
ղութեան դահլիճն ելաւ և Մէնչու-
րը կայսերական Տիվանին փխտար
էֆէնդիին յանձնեց։

Նա ալ կարմիր չուսայով ծածկը-
ւած և ծաղիկներով զարդարուած
բարձրաւանդակի մը վրայ երկնով
կարդաց։ Սոփորական ազօթքներն
ու բարեմաղթութիւնները կատար-
ւելէ ետեւ, սենեկապետ Թահիր պէյ
և հոն ներկայ գտնուող բարձրաստի-
ճան անձինք իրենց շնորհաստու-
թիւնները մատուցին Վսեմ Արքայազամ
վաշային։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԵՍԶԱՍԵՐ ՈՒՄՈՒՄՈՒՆ			
11 սեպտ. չորեքշաբթի իրիկուն	50.21		
12 » հինգշաբթի առաւօտ			
բացուեցաւ	51 8		
կէս օր	51		
Կ. Պօլսի 14 սեպտ.			
Սոսիէթէ ժէնէրալի բաժինը Անդր. 7 25			
« փոխաւորութեան »	4 34		
Կ. Պօլսի Պահպանի »	3.22		
Քրէտի Ժէնէրալ »	11 1 2		
Քրէտի Սթրոս-Թիւրք			
Երկրորդական հիւ	Ֆր. 423		
նոյն	97		
Փոխ. 1863	» 34		
» 1865	» 342		
» 1869	» 292		
» 1872	» 84		
» 1873	» 280		
Թրամուէյ	Օսմ. լիր	5 40	

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ա. Զ. Գ. Ի. Ն. ԲԱՐԻՔ ԸՆԴՆԱՆԵՐՈՒՆ ՎԱՐՁՔԸ

Մարդկութեան անհրաժեշտ պայ-
մանն է, որ մարդ մը որչափ բարի
կամ առաքելի ըլլայ, դարձեալ որ-
խալանքէ զերծ չէ։ Ամեն հին և նոր
պատմութիւնք լին են օրինակներով.
ամենէն մեծ մարդիկ, մինչև իսկ ա-
նոնք՝ որ առաքելութեան տիպար
ճանչուած են, մարդկային տկարու-
թեան հարկերէն ազատ չեն մնա-
ցած։ Հետեւաբար մարդ մը բարի և
առաքելի ըլլալու կամ ճանչուելու
համար հարկ չէ որ անխաղ ըլլայ,
բնաւ թերութիւն չունենայ։ Այսպի-
սի կատարելութիւն մ'Ստուծայ մի-
այն յառուի է, մարդոց տրուած չէ։
Բայց պատմութեան արգարու-
թիւնը մարդոց վրայ դատաւարան ը-
նելու համար կշիռ մ'ունի ձեռքը,
հիշդ. այն կշիռն պէս, որով սեղա-
նաւորք զուտ ու անխաղ արդիւն-
ները պակասեցնեն ու խաղախա-
ներէն կը դառնան։

Այս ընդհանուր արգարութեան
կշիռը ժամանակէ մ'իկել կորսուած
է մեր ազգին մէջ։ Մեծնական բա-
րեմանութիւնք, արժանիք, ընկե-
րական սուրբնութիւնք, որով մար-
դիկ իրենց նմանեաց առջև յարգ,
համարում և պատիւ կը գտնեն, ի-
րենց կարեւորութիւնը կորուսած են
մեր մէջ, բնաւ արժէք չունին, մեր
կշիռն նմարին մէջ չեն մտնել՝ եւ-
րօր այդ բարեմանութեանց ահէր

եղող անձինք մարդկային տրեւորու-
թեան մը մէջ գտնուին, երբոր բա-
ղում բարեաց, բարութեամբ առաքելու-
թեանց հետ ամենափոքր սխալ մը
գործեն։

Թող Ազգին համար տարիներով աշ-
խատի մէկը, ամեն կերպ զոհողութիւն
ընէ. եթէ դիպուածով սխալ մը գոր-
ծեց, ըրած բոլոր ծառայութիւններն
անմիջապէս կը մոռցուին, և նախա-
այինք, անարգանք, թուրքումուր չը
մնար՝ կը թափին գլխուն։ Այս է հի-
մա մեր ազգին ձիւ ծառայութիւն
կամ բարիք ընող անձանց բաժինը։

Արժանեաց ճանաչում, ծառա-
յութեանց գնահատութիւն, կատա-
րելութեանց և թերութեանց կշիռ-
դատութիւն, արդար չափով ներու-
ղամտութիւն՝ անձանց հանգամանք-
ներ են մեր մէջ. նմարին մէկ կող-
մը միայն կը դիտենք միշտ՝ բամ-
բասանաց և չարախօսութեանց նիւթ
գանեւ համար. իսկ նմարին ծանր
կշիռը կողմը չտեսնելու կը դարձնենք.
առանց բնաւ խորհելու թէ այս ա-
նարդար ընթացքով մեր ազգին տու-
նը կը փլցնենք։

Ազգին որ և է ծառայութիւն կամ
բարիք ընող մարդիկ, կամ Երկրային
վարձուց յաւով, կամ աշխարհի մէջ
բարի անուն և յարգ ծառայութեան
նպատակաւ, և կամ իբրեւ պարտա-
կանութիւն նկատելով կ'ընեն, և ե-
թէ սխալմամբ պակասութիւն մ'ալ
գործեն, զայն առաւելով փոխարի-
ներու առիթ կը փնտռեն, որպէս զի
ըրած ծառայութիւններուն կամ բա-
րեւորութեանց յարգը չկորսի։ Ա-
նարդար, թշնամանք, հարուածել
այսպիսի անձինքը, ազգն անոնց ծա-
ռայութիւններէն զրկել է. վստահ
որչափ և ազդեանք կամ հոգեւէր
ըլլայ մէկը, անարգանաց չկրնար հան-
դուրծել։

Այս ընթացքով գործն հիմա այն
վիճակին հասած է, որ չառ կարող
և ձեռնհաս ազգայինք ազգային
պաշտօններէ կը փոխին, վստահ զի ազ-
գին ծառայութիւն կամ բարիք ը-
նեն՝ իրենց վրայ անարգանք և վա-
տահարաւորութիւն հրաւիրելու մի-
ջոց կը համարին, հետեւաբար ազ-
գին գործերը մեծ մասամբ անար-
ժան աշխարհ և շահասէր անձանց
ձեռք կը մնան, որք այնչափ դիւ-
րագոյց ըլլալու և բամբասանքէ
կամ թշնամանքէ վախնալու պատ-
ճառներ չունին, և այսպէս ազգին
թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական
վիճակն հեռացնուէ կը վատթարի։

Երբոր խորհի մէկը թէ մեր ազ-
գին մէջ ամեն պաշտօն ձիւ զոհա-
ղութիւն է, ամեն ծառայութիւն
բարեւորութիւն է, ամեն տուրք
ողորմութիւն է, կրնայ երեւակայել
թէ ձեռնհաս, կարող, առատաձեռն
և բարեւէր անձանց ազգային գոր-
ծերէ զզուել ու հեռու կենալ որ-
չափ վնասակար է ազգին, և որչափ
դառն հետեւանք պիտի ունենայ՝ ե-
թէ այս ընթացքը տակաւին շարու-
նակէ։

Հետեւեալ յօդուածը, որ Տիֆլիսի
Մեղու Հայաստանի շաբաթաթերթին
օգոստ. 24 թուոյն մէջ հրատարակ-
ւած կ'անենք, ամեն լրջամիտ ազ-
գայնոց ուշադրութեան արժանի կը
համարինք, մանաւանդ ըրած մէկ
ամենակարեւոր յայտնութեան պատ-
ճառաւ, որ երկու տարիէ 'ի վեր ազ-
գին մէջ խաղցուած խաղերուն եւ
նիւթուած դատարարութեանց դադա-
նիքն երեւան կը հանեն։

«Տաճկաստանի Հայոց վիճակի վե-
րայ բազմիցս մենք արեւ ենք խոր-

հըրդածութիւնք և այս պարտք ենք
համարել մեզ համար իբրեւ մի ազ-
գային լրագրի խմբագիր։ Այս դը-
րութեանց մէջ մենք միշտ աշխատ
ենք եղել հետեւել ճշմարտութեան,
և ջատագովել այն՝ ինչոր խղճի մը-
տօք ազգի համար շահաւէտ և օգ-
տակար ենք համարել։ Գուցէ կար-
ճամիտ ոմանք մեզ ևս վերաբերեն
կուսակցական ոգի, թէ մենք Տաճ-
կաստանի Հայոց գործերի վիճակի
վերայ խօսելիս, աւելի 'հսկում ենք
'ի պաշտպանութիւն հրաժարեալ խը-
րիմեան Հայրիկի. այդ մեզ փոյթ չէ-
դա ժամանակի արդիւնքնէ։ Կու-
սակցական ոգին, կիրքն, շահամո-
լութիւնն ու անձնականութիւնն այն-
քան տիրել են մերոնց, շնորհիւ ան-
բարեմիտներու ու իրանց կոշտ մն չը
ճանաչող խմբագիրներու ոմանց, որ
մերայինք արեւալ դրութեան մէջ
են։ Նոյա համար ճշմարտութիւն և
արժանապէս գնահատութիւն մի անձ-
նի չկայ։ Մեր գործակատար անձանց
մեծ մասն այնքան վատթար են և
աղքատ մտաւորապէս և բարոյապէս,
որ լաւ բացառութիւն է կաղմում,
և որեւիցէ անհատ արժանաւորու-
թիւնք փուշ են նոյա աչքում։

Ուստի պիտի աշխատեն ծածկել կամ
սեպնել այդ արժանաւորութիւնքն,
որ իրանց մերկութիւնը չերեւի։ Նը-
ման զմանն սիրէ, պարզ է։ Իրաւ
է, մեր գրութիւններէ կարող էին
ընթերցողք եղողականել, որ մենք
աւելի պաշտպան ենք հրաժարեալ
խրիմեան Հայրիկի գործունէութեան
ուղղութեան, որ շահաւէտ էր ազ-
գին և եկեղեցու։ Բայց սորա ազ-
բերն ոչ թէ կուսակցական ոգին է
եղել, բնաւ ոչ, այլ ճշմարտութիւնն
ու համոզմունքը. մեզ համար մին-
չև անգամ մեր անձնական տկարութիւն
չէ ունեցել և չունի հասարակական
գործերի վերաբերութեամբ, թո՛ղ
թէ մի ուրիշին։ Մենք 'հաւատու
ենք, որ խրիմեանը այսօր մեր եկե-
ղեցականներէ մէջ ամենընտիրներէն
է իւր հեղ, խոնարհ, համբերող,
ներող, անշահասէր, ազատամիտ և
ժողովրդասէր բնաւորութեամբ, իսկ
նորա սակաւաշխատութիւնն առած
կարող է համարվիլ մեր՝ մոնաւանդ-
ութեամբ կրօնաւորներու յետին
և ամենատեղէտի համար։ Կարող է
արդեօք ամենաբարձր աստիճանի ե-
կեղեցականներէն սկսած մինչև յե-
տին իւր ձեռքը կրճի վերայ դրած
պարզ խղճով քար արձակել նորա վե-
րայ։ Մենք ամեն մարդիկ մեզաւոր
ենք համարում. անսխալ միայն Ստա-
ւած է. բայց աշխարհիս երեսին ա-
մեն բան չափ ունի. մինչև ցայժմ
անչափ էր մեր աչքում խրիմեանի համ-
բերութիւնը, միայն և ահա այժմ
նա էլ չափաւորեցաւ, նորա բողոքն
էլ հանդէս դուրս եկաւ՝ այժմ յու-
սարի է որ Տաճկաստանի մեր եղ-
բարց վիճակը փոքր առ փոքր պար-
զվի և միտքը նստի խրիմեանը մեր
աչքում իւր անկման մէջ աւելի մեծ
է և բարձր քան էր Պատրիարքա-

կան միտքի վերայ։ Այստեղ նա չը
կարողացաւ ազգի վիճակն ապահո-
վել, իսկ այժմ իւր բողոքով և դա-
տաստան պահանջելով անշուշտ կա-
րող պիտի լինի այս անգամ։

Մենք Կ. Պօլսոյ ազգային գործե-
րի ներկայ վիճակի վերայ խօսելիս,
միշտ պահանջել ենք իբրեւ միակ մի-
ջոց խաղաղութեան և ազգային վար-
չութեան ապրողային կանոնաւորու-
թեան համար դատաւարան և պատի-
ժը հաստատական յանցաւորներու և
ժողովուրդ մղորեցնողներու։ Սրա-
զան խրիմեանի մինչև ցայժմ պա-
հած լուրութիւնն ու համբերութիւնը

հըրդածութիւնք և այս պարտք ենք
համարել մեզ համար իբրեւ մի ազ-
գային լրագրի խմբագիր։ Այս դը-
րութեանց մէջ մենք միշտ աշխատ
ենք եղել հետեւել ճշմարտութեան,
և ջատագովել այն՝ ինչոր խղճի մը-
տօք ազգի համար շահաւէտ և օգ-
տակար ենք համարել։ Գուցէ կար-
ճամիտ ոմանք մեզ ևս վերաբերեն
կուսակցական ոգի, թէ մենք Տաճ-
կաստանի Հայոց գործերի վիճակի
վերայ խօսելիս, աւելի 'հսկում ենք
'ի պաշտպանութիւն հրաժարեալ խը-
րիմեան Հայրիկի. այդ մեզ փոյթ չէ-
դա ժամանակի արդիւնքնէ։ Կու-
սակցական ոգին, կիրքն, շահամո-
լութիւնն ու անձնականութիւնն այն-
քան տիրել են մերոնց, շնորհիւ ան-
բարեմիտներու ու իրանց կոշտ մն չը
ճանաչող խմբագիրներու ոմանց, որ
մերայինք արեւալ դրութեան մէջ
են։ Նոյա համար ճշմարտութիւն և
արժանապէս գնահատութիւն մի անձ-
նի չկայ։ Մեր գործակատար անձանց
մեծ մասն այնքան վատթար են և
աղքատ մտաւորապէս և բարոյապէս,
որ լաւ բացառութիւն է կաղմում,
և որեւիցէ անհատ արժանաւորու-
թիւնք փուշ են նոյա աչքում։

Ուստի պիտի աշխատեն ծածկել կամ
սեպնել այդ արժանաւորութիւնքն,
որ իրանց մերկութիւնը չերեւի։ Նը-
ման զմանն սիրէ, պարզ է։ Իրաւ
է, մեր գրութիւններէ կարող էին
ընթերցողք եղողականել, որ մենք
աւելի պաշտպան ենք հրաժարեալ
խրիմեան Հայրիկի գործունէութեան
ուղղութեան, որ շահաւէտ էր ազ-
գին և եկեղեցու։ Բայց սորա ազ-
բերն ոչ թէ կուսակցական ոգին է
եղել, բնաւ ոչ, այլ ճշմարտութիւնն
ու համոզմունքը. մեզ համար մին-
չև անգամ մեր անձնական տկարութիւն
չէ ունեցել և չունի հասարակական
գործերի վերաբերութեամբ, թո՛ղ
թէ մի ուրիշին։ Մենք 'հաւատու
ենք, որ խրիմեանը այսօր մեր եկե-
ղեցականներէ մէջ ամենընտիրներէն
է իւր հեղ, խոնարհ, համբերող,
ներող, անշահասէր, ազատամիտ և
ժողովրդասէր բնաւորութեամբ, իսկ
նորա սակաւաշխատութիւնն առած
կարող է համարվիլ մեր՝ մոնաւանդ-
ութեամբ կրօնաւորներու յետին
և ամենատեղէտի համար։ Կարող է
արդեօք ամենաբարձր աստիճանի ե-
կեղեցականներէն սկսած մինչև յե-
տին իւր ձեռքը կրճի վերայ դրած
պարզ խղճով քար արձակել նորա վե-
րայ։ Մենք ամեն մարդիկ մեզաւոր
ենք համարում. անսխալ միայն Ստա-
ւած է. բայց աշխարհիս երեսին ա-
մեն բան չափ ունի. մինչև ցայժմ
անչափ էր մեր աչքում խրիմեանի համ-
բերութիւնը, միայն և ահա այժմ
նա էլ չափաւորեցաւ, նորա բողոքն
էլ հանդէս դուրս եկաւ՝ այժմ յու-
սարի է որ Տաճկաստանի մեր եղ-
բարց վիճակը փոքր առ փոքր պար-
զվի և միտքը նստի խրիմեանը մեր
աչքում իւր անկման մէջ աւելի մեծ
է և բարձր քան էր Պատրիարքա-

մենք հիմնականում ենք համարում գործին: Գործա հասկանալի են և աղքատ մի բարեմիտ, հանգարտ, պատկառու և խորհող ժողովրդեան մէջ, և ոչ մի արքայ, կրքերով լի, աչքերն արեւն կոխած, շահամար ու փայլուն ասկին տեսնելու աչքերը շրջող անձանց մէջ: Այսպիսեաց կարեւոր է զօրեղ հարուած ճակատին, որ կանգ առնուն իւրեանց մարդը ընթացքի մէջ, սխալիլն և խորհելն իւրեանց գործերի վերայ: Չափազանց համբերելով իւրն ու լուծելով միայն կը քաջալերէ շահամարներուն իրանց փնտրողը և աղքատիւր ընթացքի մէջ: Մեր ասածին ապացոյց է այն լուրը, թէ մէկը՝ չը հասկանալով որ խրիմեանի և տրա միմասկի մէջ եղող անձանց յաղթութիւնը նոյն անկան մէջ է, պարծենալով ասած է, խելօշի անհոգի քիչ քան և հինգ հազար հոգի է նոյնը: Մտածում են արդեօք այսպիսիք, թէ ապագայում որքան հազար անգամ լծուք ու մուր պլտի ստանան իրանց երեսին և որպիսի տառերով դրօշմում են պատմութեան մէջ դաւաճաններին անունները: Մինչև ցայտմ գործողներն էին դադարի մեքենայութիւնը: Եւ յաղթութիւնն ապագայում երևան դուրս կը գայ: Խրիմեան Սրբազանը չափաւորել է իւր համբերութիւնը. նա տուել է ազգային ժողովին իւր բողոքը այն զրպարտութեանց, բամբասանաց և անուանարկութեանց, որոնք տեղում էին նորա վրայ հակառակորդներն, ի չարք գործներով նորա համբերութիւնն ու լրջութիւնն: Այս բողոքը, որ ապագայում ենք մեք Մեղուի այս համարում, յաւանդ ենք, որ կը պարզէ գործերն և ազգի ապագայ խաղաղութեան առիթ կը լինի: Եթէ յանցաւոր է, թող զոհվի խրիմեանն ազգին խաղաղութեան և անդորրութեան համար: Այս էլ նորա մեծահոգութեան նշան կը լինի: Իսկ եթէ ոչ, թող իւրեանց պատիժը կրեն դաւաճանները յօրինակ և ի դրուշութիւն ապագային:

ԱՌՆԻՏՐԵԿՆԵ

ՆԵՐՔԻՆ ԲԵՐԲ

1/իւր 100 զրէն

Բառնակ

Առանա, Թարսու, հօխ 7 1/4—7 3/4
Վրասա, Պարսկ, 5—6
Պարսկ, Կէյլէ, Մայթօս 7 3/4—8 1/2
Բարդ, Լուացուած
Բուժիչ, հօխ 13—13 1/2
Անտուր, 12 1/2—13 1/2
Բարդ, չլուացուած
Էսկի Շէհիր, հօխ 7 1/4—7 1/2
Եօղզու, Էնկիւրիւ, 5 3/4—6 1/2
Քառասպալի, — 1. 125
Բարդ, սոյն (թիֆլիս) Էնկիւրի զրէ 41—42
" " Բ. տեսակ 35—38
" " Պէյրապար, Գաթթ, 40—41
" " Վան Էս սոյն 24—30
Մարթ սոյն, 8—12 1. 1 լիւր 125
" գաթի զոյղը 20—25

Մետաք

Պրուսայի, հօխ 450—480 1. 400
Բաքրա, Կէյլէ 160—220
Պարսկ, Սիրիա 32—36

Խոզակ չոր

Պրուսայի, Սիրիա, հօխ 45—50 125
Էսկիւրի, Վրաս 48—60
Շալաճ 28—35

ձէնրի

Կեսարիա, Էնկ. հօ. 43—43 1/2 400
Խաբիլի, Թոգաթ 10 1/2—12
Գաղի լիժ (թիֆլէ) 30—36
Կանեփ Անտու, 4 1/2—5 1/2 402
Ահիօն ա. տեսակ 420—440 409
" վար 380—400

Կետաւա, քիլէ 39—40 425
Սուսու, օխ 4 1/2—4 3/4 զրէ 1. 125
Անիսոն Գիսի, օխ 6 1/2
" Բուժիչ 5 1/2—6
" Անտու, 3 1/2—4
Բեմեն (թիֆլիս) 4—4 1/2
Ջէթ Միւրիլի և Արարիկի հօխ 5 1/2—6 զրէ 407
" Կիրիս հօխ 6 1/2—6 3/4
" Գիս 9—10
" Մետաք 7—
" Զուճա, Վրաս 6 3/4—7
Օճառ Գաթթի հօխ 5
" Զանիա 4
" Ռէթիս 4 3/4
" Միւրիլի 4 1/2—5 1/2 1. 125

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐԲ

Խաչիլէ Բիւ Ա. տես 100 օխ 1360—1450
" Բ. " " 1480—1280
" Գ. " " 1000—1400
" Եձէն 45—46 1. 104
Շաքար փոշի չիլ. կենդ. 228—230 1. 103
" Գաղէ 230
" Գլուխ 5 քիլ. 250 1. 400
" 3 " 256—258
Պղպեղ Ա. և Բ. տես օխ 40 3/4—11
Միւրիակ (զարէնֆիլ) 24—25
Խոճիկ կենդ. 240—280
Լեզակ (չիլի) Պէնկ. 420—430
" " Մարթ 70—90
Որդան կարմիր (չլուր) 42—46 1. 404
Բէթրոլ (կաղ) Ամեր. անտ. 52—55 1. 100
Սարարձէթ ըստ տես 69—110
Սպակի 49—20 ֆր.
Չոյ Գոնկո հօխ 20—28 1. 405
" Բէթրօ Ժաղիկ 45—420
Բրինձ ձէնով 100 քիլ. 45—46 ֆր.
" Զնդ. " զրէ 168—170 1. 400
" Եղիպտ. օխ 3 1/2—4 1. 420
Ռոմ Անդ. 7 1/4—7 1/2 Կալ.
" Ամեր. Թրիէստ 9 1/2—11
Կարաղ Էղ Սիւրի օխ 14—14 1/4
" Թրիէստ և Բուժ. —
Ճարպ Ռուս. հօխ 7—8
" Բուժիչ 8 1/2—10 425
Խաղաղ Ա. տես 36—40
" Բ. " 32—34

ՄԵՏԱՔ

Երկաթ Թրիէստ անտու 240—242 400
Չոգաճէ Էրձ. կենդ. 83—90—100 406
Բեհեցու 160—165
Տախտակ 115—120
Շիլի 140—
Պղինձ Անդ. հօխ 14 7/8—15 400
Չիլի 400 " 112—115 ֆր.
Անագ կենդ. 700—710
Կապար տախ. և խոզով 150—155 401
Թանաք (թէնէթէ) 2 անտ. 333—340 400
Բարձրից Կ. 15/48 50 քիլ. 93—94

ԱՐՄՏԻԲ

Յորեն կարծր, Ազալի քիլէ 38—39 420
" " Խամպիլ 39—40
Կիրաւ Ազալի 40— 420
" Գանուր 38—39
Կարծր, Պալլէ, Պարկ. 34—35 1/2
" " Ռոտտի. Ազր. 35—36
Յորեն կալուր, Գանուր 33—35
" " Բուժիչ 34—36
Եղիպտացոր, Գանուր 48—49 1/2
" Բոթի, Օրտու 49— 400
" Բուժիչ 425
Գարի, Գանուր 47—48
" Բուժիչ 48—48 1/2
Վարակ (Էուր.) Անտու 44—45
" Բուժիչ 44—45
Հաճար (չալուար) —

ԱԼԻԻՐ

Օտէսա Ա. տես 60 հօխ 135—140 1. 400
" Բ. " 132—135
" Գ. " 125—128
Խոյրայ, ըստ 83—128
Կալաց Ա. " 147—
" Բ. " 107—108
Բեհի Ա. 120 հօխ 260—265 420
" Բ. " 240—260 425

ՄԱՆԻՏԱԹՈՐԻԱ

Մահուտի
Թ. 5—7 լիւրէ 7—7 1/2 405
Մէքսիկա 4—8 " 8—
Լոնկ Գոթ 3—6 " 7 1/8—7 1/2
" 6 1/2—7 1/2 " 7 1/8—7 1/2

8—12 " 6 7/8—7 1/8
Բառնակ մանած
Էքսթրա Կ. 8 1/4 լիւր 53—60
Վաթիլ 64—68—74
Էքսթրա 16/24 " 68—86
Վաթիլ 65—72

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԻՆՔՆՕԳՆՈՒԹԻՒՆ

Ներքին, վարձատր և Թարգման
Լուսարար Կենտրոնական

Հեղինակ

ՍՍՄՈՒԼ ՍՍՍՍԼՍ

Թարգմանեաց Գաղղիկէն
Հաճեալ ծանօթութեամբ և յաւելուածով

Ս. ԷՄԻԼԻՔՆԵԱՆ

Մեր ազգայնը ընթերցանութեան ու խորհրդածութեան արժանի օգտակար բայց հազուադէպ գրող առաջիններէն մին կրնայ համարուիլ իրաւամբ այս գործը:

Անգղիացաց «Գու քիլ օգնէ» Աստուած ալ կ'օգնէ ոչ նշանաւոր առածը՝ որ Անգղիոյ եւ Ամերիկայի Միացեալ Նահանգաց ժիր եւ անխոնջ ժողովրդաց մեծ ուժեղ եւ երջանկալի թանկեղէն ընտանիքն է, անթիւ օրինակներով ու փորձերով հաստատուած. եւ եթէ կայ աշխարհի վրայ ժողովուրդ մը՝ որ այս առածն իրեն միակ եւ սկզբունք բռնելու ամենէն աւելի պէտք ունենայ անտարակոյս մեր նիւսն եւ անգղիական ազգն է:

Պիտի տեսնէ այս գրքին մէջ որ զխոթութեանց, արուեստից, ճարտարութեանց, դրամանութեան եւ գործնական կենաց մէջ նշանաւոր հանգիստացող ամեն ապագէղի մէջ յառաջադրուի եւ աննշան վիճակներէ բարձրանալով անուանին անմահացող աւանանոր անձինք՝ մի միայն իրենց յարատեւ ջանքը եւ աշխատութեամբ կրցած են յաջողիլ:

Այսպիսի ընտիր եւ արդիւնաւէտ գործի մը թարգմանութիւնն ու հըրատարակութիւնն ստուգելու կարեւոր ծառայութիւն մ'է մեր ազգին. ուստի կը փութանք յանուն ազգին յընդհանրապէս իւր յայտնի խաղաղութեան խաղաղութեան, եւ մանաւանդ իւր միջին շրջանի մէջ. Թող հանգիստէ քիչ միայն, որ ի սկիզբ ազգին շարժեալ թարգմանի տուած եւ ժողովրդեան զիւրաւանտը չլին ընկելու համար ապագայութեան ծախքէն պակաս դին մ'որոշած է՝ իւր քաղկէն զոհելով:

Ամեն Հայ գրողաւորաց քով կը գտնուի Գին կէս արծաթ մէճիտ:

ՕՐԵՑՈՅՑ

ՊԱՐԶ

1875 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Գործնեալ յերեմիա Եւստանայի Խաղաղիկ կը ծախուի գրողաւորաց քով ի զին 60 փարա: Կի գրողաւորին է Մեր ճանը փաստաբանի խոնի վերնայարկը թիւ 28:

Վերջինչեալ սենեակը յաճախորդաց համար բաց է ամեն օր ժամը 4 1/2 քէն մինչեւ 6:

Օրացոյցն ընդարձակ տեսակն ալ ապագայութեան վրայ ըլլալով, մինչեւ ամառայ վերջերը պիտի հրատարակուի:

Ա. ՏԻԽԱՆ

ՊՐԱՅԼՈՆ ԴԵՐԿՈՍՍ

Թարգմանեաց Մ. Մամուրեան

Հասցէ Տաշիշէ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՏԵՏԵԱՆԻ

1874

Ա. Տիւրայի Էրեք Հրացանակիրք

Եւ Գրան տարի ետքը վէպերը հրատարակելէն ետեւ հարկէր նաեւ թարգմանել եւ ապագայ տալ յիշեալ վէպերը կերպով մը շարունակող գործն, որ է Պրաժլոն Դերկոմոն անուանի վիպասանին մեծ վէպերէն մին որ թէ՛ պատմական նկարագրերով, թէ՛ հետաքրքրաշարժ անցքերով եւ թէ՛ ճարտար հիւստածքին կողմէ ընթերցողին աշտարակութիւնը կը գրաւէ եւ միտքը կը կրկնէ:

Ամբողջ գործը 12 հատորէ պիտի բաղկանայ: Բոլորին համար բաժանորդագրութեան դինն է 120 դահեկան: Իւրաքանչիւր հատորը 12 դահեկան: Բաժանորդ. գրուի ուղղը կրնայ դին մեկ Կ. Պոլսու Թ. Գաղթֆեան Էրզրաց զրատունը, Չաքմաքըլար Եօղուշը թիւ 16: Զմիւռնիս Տէտէեանց գրատունը:

ՀԱՐԻԻՐԻՆ 25 ՁԵՂԶ

ՄԻՆԵՆՍԵՆ ԻՒՐՆԻԿԵՐԸ

ՆՈՐԱԿԱՌՈՅՑ

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԲԱՑՈՒԻԼԸ

Ս. Մ. Մինասեան եւ ընկերք պատիւ կը համարին ծանուցանել արդոյ հասարակութեան, որ իրենց Ամերիկեան վաճառատունը, վերստին կառուցուելով մօտեւր բացուեցաւ, եւ սոյն առթիւ իրենց բոլոր վաճառքները զեղչով պիտի ծախուին սկսեալ օգոստ. 8է20էն մինչեւ 18/30 սեպտեմբեր. ուստի հասարակութիւնը յարգանք կը հրաւիրուի այս պատեհութեան օրուս քաղելու:

Կարի գործիք՝ Սեպա եւ Երկաթ խողովակներու դիններէն միայն հարաւրին 10 զեղչ պիտի ըլլայ:

Բոլոր միւս վաճառաց գիններէն հարաւրին 25 զեղչ պիտի ըլլայ:

Սեպտեմբեր վաճառատուն

Ճամի գարուսի Ղալաթիա

13

ԻԼԵՆ

Սերիպ պուշտայ, քիլէ 50000, պէհէր քիլէս 38 զրուշ:

Եռամաշտ պուշտայ, քիլէ 50000, պէհէր քիլէս 34 1/2 զրուշ:

Շէքեր, քիլէ 40000, պէհէր քիլէս 6 զրուշ 5 փարա:

Բախարմաշթ մօմու, քիլէ 5000, պէհէր քիլէս 16 զրուշ:

Մաքարմալը քէհրիլէ, քիլէ 60000, պէհէր քիլէս 4 զրուշ 25 փարա:

Բէշէր, քիլէ 7000, պէհէր քիլէս 5 զրուշ 20 փարա:

Շէրպէթիք քէքեր, քիլէ 950, պէհէր քիլէս 6 զրուշ 20 փարա:

Գաշէր քիլէ 9000, պէհէր քիլէս 10 զրուշ 20 փարա:

Ասաքիլի Շահանէ լաղըմէսի իլին լուղու մի օրուս միւստապէ գօնը:

Իւս պալատէ մահարկէր սէքիլ քալէմ էշեա ֆիւթը մուրաքամէլէրի վէճէլէ թալիպէլէր Եօհանէսիտէ օլուպ, Բէշէլ Լէշ քէպէթիք քէքերին իւրը լուղիլին օն իրենի վէճէլէն:

Այն կիւնիւ վէ մաքարմալը քիլէ քէհէր լիլէն վէ գաշէր քիլէ 9000, պէհէր քիլէս 10 զրուշ 20 փարա:

Ասաքիլի Շահանէ լաղըմէսի իլին լուղու մի օրուս միւստապէ գօնը:

Իւս պալատէ մահարկէր սէքիլ քալէմ էշեա ֆիւթը մուրաքամէլէրի վէճէլէ թալիպէլէր Եօհանէսիտէ օլուպ, Բէշէլ Լէշ քէպէթիք քէքերին իւրը լուղիլին օն իրենի վէճէլէն:

Այն կիւնիւ վէ մաքարմալը քիլէ քէհէր լիլէն վէ գաշէր քիլէ 9000, պէհէր քիլէս 10 զրուշ 20 փարա:

Ասաքիլի Շահանէ լաղըմէսի իլին լուղու մի օրուս միւստապէ գօնը:

Իւս պալատէ մահարկէր սէքիլ քալէմ էշեա ֆիւթը մուրաքամէլէրի վէճէլէ թալիպէլէր Եօհանէսիտէ օլուպ, Բէշէլ Լէշ քէպէթիք քէքերին իւրը լուղիլին օն իրենի վէճէլէն:

